

ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ

07.12.2015թ.

12<sup>00</sup> Նիստի մեկնարկ: Բացման խոսք՝ մարզպետ, խորհրդի նախագահ  
Ա. Ղահրամանյան:

12<sup>15</sup> Օրակարգի ներկայացում և հաստատում:

12<sup>30</sup> Երիտասարդական կառույցների հետ համագործակցության  
ապահովման և նրանց գործունեությունը նաև դեպի գյուղական  
համայնքներ ուղորդելու վերաբերյալ:

13<sup>00</sup> 2015թ. կատարված աշխատանքների ամփոփում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

07.12.2015թ.

ք. Արմավիր

Նիստը վարում էր ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 17-ը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Գ. Մուրադյանը, ՋԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էր երկու հարց՝

1. Երիտասարդական կառույցների հետ համագործակցության ապահովման և նրանց գործունեությունը նաև դեպի գյուղական համայնքներ ուղղորդելու վերաբերյալ:
2. 2015թ. կատարված աշխատանքների ամփոփում:

Խորհրդի նիստը սկսելուց առաջ նիստի մասնակիցները հարգեցին երկրաշարժի զոհերի հիշատակը: Նիստի օրակարգը ներկայացվելուց և հաստատվելուց հետո, խորհրդի անդամները հանդես եկան Երիտասարդական կառույցների հետ համագործակցության ապահովման և նրանց գործունեությունը նաև դեպի գյուղական համայնքներ ուղղորդելու հետ կապված առաջարկություններով:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Գ. Մուրադյանը առաջարկեց կապեր հաստատել մարզում գործող երիտասարդական կառույցների հետ, խրախուսել նրանց գործունեությունը գյուղական և սահմանամերձ շրջաններում՝ տալով այդ բնակավայրերում ապրող երիտասարդներին ինքնադրսևորվելու և հասարակական խնդիրների լուծմանը մասնակից լինելու հնարավորություն: Առաջարկն արժանացավ խորհրդի մյուս անդամների հավանությանը:

Նիստի օրակարգի համապատասխան 2015թ. երիտասարդության ոլորտում կատարված աշխատանքները ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Գ. Մուրադյանը:

Խորհրդի նախագահ՝

Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝

Ա Ավետիսյան